

**Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2020-2021 ուստարի)
11-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)**

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է գումարվել քրիստոնեության դավանաբանության խնդիրներին նվիրված Տիգրանի ժողովը.

ա/ 451 թ.	բ/ 615 թ.	0,5 մ.
գ/ 554 թ.	դ/ 631 թ.	
2. Ո՞վ է հաջորդել Իսքանդար Կարա-կոյունլուին.

ա/ Շահ Աբաս	բ/ Ջհանշահ	0,5 մ.
գ/ Կարա Յուսուֆ	դ/ Սելիմ Ահեդ	
3. Որտե՞ղ է թաղվել հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին.

ա/ Տայք	բ/ Արծալի	0,5 մ.
գ/ Դամասկոս	դ/ Ռշտունիք	
4. Ո՞վ է հիմնադրել Սկևռայի դպրոցը.

ա/ Հովհան Որոտնեցի	բ/ Գրիգոր Սկևռացի	0,5 մ.
գ/ Ներսես Լամբրոնացի	դ/ Հովհաննես Իմաստասեր	
5. Ո՞ր թվականին է Տիգրան Երվանդյանը գրավել Բաբելոնը.

ա/ Ք. ա. 92 թ.	բ/ Ք. ա. 539 թ.	0,5 մ.
գ/ Ք. ա. 612 թ.	դ/ Ք. ա. 553 թ.	
6. Քանի՞ տարի էր Արտավազդ 3-րդը ապրել Հռոմում.

ա/ 25	բ/ 15	0,5 մ.
գ/ 40	դ/ 30	
7. Ո՞ր քաղաքում է հիմնադրվել սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակը Արևելյան Հայաստանում.

ա/ Ստեփանավան	բ/ Ալեքսանդրապոլ	0,5 մ.
գ/ Երևան	դ/ Ղարաքիլիսա	
8. Ե՞րբ է տեղի ունեցել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը.

ա/ 1875 թ. հունիս	բ/ 1882 թ. նոյեմբեր	0,5 մ.
գ/ 1880 թ. օգոստոս	դ/ 1883 թ. ապրիլ	
9. Ե՞րբ է Հայաստանում գահակալել Պարթևստանի երբեմնի թագավոր Վոնոն Արշակունին.

0,5 մ.

10. Ո՞ր իշխանի որդու օրոք են Կիլիկիայում վերացվել բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը.

0,5 մ.

11. Հայ գործիչներից ո՞վ է մասնակցել Նադիր շահի՝ Հնդկաստան կատարած արշավանքին.

0,5 մ.

12. Ո՞ր իշխանական տան ներկայացուցիչներին էին կոչում Ենի-Տունյաններ.

0,5 մ.

13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

ա/ Սիս մայրաքաղաքի հռչակումը		
բ/ Բերդուսի ճակատամարտը		
գ/ Սալաի ադ Դինի կառավարման սկիզբը		

դ/ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն» աշխատության ավարտը
 ե/ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կազմումը
 գ/ Տաշիր-Ձորագետի թագավորության վերացումը
 է/ Գող Վասիլի իշխանության անկումը
 ը/ Օսմանյան պետության կողմից Ղրիմի գրավումը
 թ/ Հայոց կաթողիկոսության նստավայրի փոխադրումը Հռոմկլա

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Տայք
2. Ունիա
3. Գանձակ
4. Եդեսիա
5. Սեբաստիա
6. Կարին

ա. Ուռհա բ. Էրզրում գ. Խորագույն Հայք
 դ. Ելիզավետպոլ ե. Ձեյթուն զ. Սվազ

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Բագրատունիների օրոք հայոց բանակում ձևավորվել են «Մարզային զորքերը»:
 բ/ Արտաշես 1-ինի օրոք արքունիքում կարևորագույնը սպարապետության գործակալությունն էր և իշխանաց իշխանի պաշտոնը:
 գ/ Արշակունյաց շառավիղներից ձևավորվել է բդեշխների առանձին ազնվականական խավը:
 դ/ 852 թ. վասպուրականցիները Աշոտ Արծրունու գլխավորությամբ ամրացել են Նկան ամրոցում:
 ե/ Բագրատունյաց թագավորը կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի կամ այլ մեծամեծ պաշտոնյաների հետ:
 զ/ 978 թ. Տաշիր-Ձորագետի թագավորությունը հիմնադրել է Գուրգենը՝ Աշոտ 3-րդի որդին:
 է/ Տարոնի իշխան Աշոտ Բագրատունու մահից հետո՝ 966 թ., իշխանությունը միացվել է Բյուզանդական կայսրությանը, որից հետո վերջիններս գրավել են նաև Սասունը:
 ը/ Կիլիկիայում կանոնավոր բանակի հիմնական կորիզը ռազմական նավատորմն էր:
 թ/ Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը 1323 թ. կնքել է հայ-եգիպտական պայմանագիր:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ Հայաստանում 1-ին դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:
 բ/ Արտաշեսյան գահակալության ամբողջ ժամանակաշրջանում Մեծ Հայքի արքան կրում էր «Արքայից արքա» տիտղոսը:
 գ/ Պարզևականք կոչվում էին հորից որդուն ժառանգվող հողերը:
 դ/ Հազարապետին վերապահված էր միայն պետական պարիակների տնօրինությունը:
 ե/ Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:

գ/ Միայն պաշտամունքային, եկեղեցական շինություններից բաղկացած համալիրները կոչվում են վանական:

է/ Միջնադարում բարձրագույն տիպի դպրոցների մի մասը կոչվել է նաև վարդապետարան:

ը/ Հասարակության բարեփոխումների միջոցով վերափոխման կողմնակից են եղել հեղափոխական-ժողովրդավարական ուղղության հետևորդները:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ «Որոգայթ փառաց»-ը սահմանադրական միապետություն ստեղծելու ծրագիր էր:

բ/ 1724 թ. Արցախի ազատագրական ուժերը պարսիկների դեմ համատեղ պայքարի մասին պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:

գ/ Անգլիայում Հ. Էմինը ներկայացել է Լոնդոնում ռուսական դեսպան Վորոնցովին և վերցնելով Ռուսաստանի վարչապետ Գոլիցինին ուղղված հանձնարարական նամակը՝ ճանապարհվել է Սանկտ Պետերբուրգ:

դ/ 1708 թ. Ի. Օրին դեսպանական խմբով ժամանել է Շամախի, 1709 թ. շարունակել իր ճանապարհը, եղել Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանում և նույն թվականի կեսերին վերադարձել Այսրկովկաս:

ե/ 18-րդ դարի առաջին քառորդում թուրքական բանակը գրավել է Թիֆլիսը և շարժվել Գանձակ:

զ/ Հալիձորի ճակատամարտից առաջ հայ զինվորներին դիմել են Տեր Ավետիսն ու Մխիթարը:

է/ Նադիր շահի օրոք իրենց իշխանությունը պահպանել են Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները:

ը/ 19-րդ դարի սկզբին Պարսկաստանը ոչ միայն չի հաշտվել ռուսական ազդեցության տարածման հետ, այլև ձգտել է ռուսներին դուրս մղել Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս:

թ/ 19-րդ դարի սկզբին Կիլիկիայում համայնքային ներքին ինքնավարությամբ աչքի են ընկել լեռնային Ձեյթունի հայկական 30 գյուղեր՝ մոտ 28 000 հայ բնակչությամբ:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

1826 թ. հուլիսին Արցախի վրա պարսկական հարձակմանը զուգահեռ Երևանի խանի զինված ուժերը ներխուժում են Շիրակի և Ղազախի գավառներ, որով սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պայքերազմը:

Գրված է՝ _____ (սխալը)

Պետք է լինի՝ _____ (ճիշտը)

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Յուրաքանչյուր հայ ընտանիք թող իրենից ներկայացնի առանձին հայ դպրոց»:

ա. Ո՞րն էր թռուցիկի խորագիրը (կամ ո՞ւմ էր ուղղված):

բ. Ինչի՞ արդյունքում է հրատարակվել թռուցիկը:

գ. Ի՞նչ կազմակերպություն է հրատարակել այդ թռուցիկը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Նշված երկրներից ո՞րն է 1889 թ. հռչակվել սահմանադրական միապետություն. 0,5 մ.
 ա/ Չինաստան բ/ Գերմանիա
 գ/ Օսմանյան կայսրություն դ/ Ճապոնիա
2. Ո՞վ է հին հունական ողբերգության հիմնադիրը. 0,5 մ.
 ա/ Սոֆոկլես բ/ Էսքիլես
 գ/ Էվրիպիդես դ/ Հոմերոս
3. Ե՞րբ են ացտեկները հաստատվել Մեխիկոյի հովտում. 0,5 մ.
 ա/ 11-րդ դար բ/ 13-րդ դարի առաջին կես
 գ/ 12-րդ դար դ/ 13-րդ դարի երկրորդ կես
4. Ո՞վ էր ռուսական կայսրը 1807 թ. Տիլզիտի պայմանագրի կնքման ժամանակ. 0,5 մ.
 ա/ Իվան 4-րդ բ/ Նիկոլայ 2-րդ
 գ/ Պետրոս 1-ին դ/ Ալեքսանդր 1-ին
5. Ինչպե՞ս է կոչվել 19-րդ դարի կեսերին Իրանում հրապարակ իջած նոր կրոնաքաղաքական շարժումը. 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Գրոտիոս
2. Ջոն Լոկ
3. Կարլ Մարքս
4. Նեստոր

ա. ռուս բ. հոլանդացի գ. գերմանացի դ. անգլիացի

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ Սասանյանների օրոք պետության ամբողջ ազատ բնակչությունը բաժանվել է չորս դասերի:
 բ/ 1502 թ. ղզլբաշները Սեֆյանների առաջնորդ Իսմայիլի գլխավորությամբ գրավել են Թավրիզը:
 գ/ 1532 թ. իսպանացի կոնկիստադոր Կորտեսը 130 հոգուց բաղկացած ջոկատով ափ է իջել ինկերի պետության հյուսիսում:
 դ/ 1618 թ. սկսված Հարյուրամյա պատերազմը առաջին համաեվրոպական պատերազմն էր:
 ե/ 17-րդ դարի 2-րդ կեսին լույս է տեսել ֆրենսիս Բեկոնի «Նոր օրգանոն» աշխատությունը:
 գ/ Ռեմբրանդտի «Անառակ որդու վերադարձը» կտավում պատկերված են մարդու տառապանքները և սերը:
 է/ Ֆրանսուա Ռաբլեին է պատկանում «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց» արտահայտությունը:
 ը/ 1921 թ. ստորագրվել է խորհրդա-իրանական պայմանագիր, որով ԽՍՀՄ-ը հրաժարվել է ցարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված բոլոր պայմանագրերից:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

08.02.2021 թ.